Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական սխրանքը

ԱԼԵՔՍԷՅ ԼՈՍԵՒ *

Մտածողի պատմա-փիլիսոփայական նշանակութիւնը չի հանդում-աւարտւում ինչ որ նոր մտքեր առաջ քաշելով, կամ էլ՝ ինչ-ինչ մտքեր կամ դաղափարներ համակարդելով։ Մտածողի պատմափիլիսոփայական նշանակելիութիւնը նաեւ չի ամփոփւում ինչ-որ նախկին դաղափարների՝ նրա կողմից կատարուած նոր լուսաբանութեամբ, կամ էլ՝ դրանց նոր մեկնաբանութեամբ։ Մտածողի պատմա-փիլիսոփայական նշանակութիւնը, վերջապէս, չի կարելի տեսնել լոկ նրա դատողութիւնների արտաքին ոճում, միայն փիլիսոփայական այս կամ այն կառուցուածքը մատուցելու ձեւում կամ եղանակում։

Փիլիսոփայութեան պատմութեան համար շատ յաճախ նշանակութիւն ունի այս կամ այն մտածողի կողմից ճշմարտութիւնը որոնել-գտնելու ուղեղիծը, նրա մշտական ձգտումը՝ ընդգրկել իսկութեան տարբեր կողմերը եւ արտայայտել հենց ճշմարտութեան որոնումը, յաճախ նոյնիսկ նաեւ անկախ նրանից, թէ նկատի են առնուած հի՞ն ճշմարտութիւններ, թէ՝ ինչ-ինչ նոր յայտնագործութիւններ։ Փիլիսոփայութեան պատմութեան համար շատ յաճախ առաջին դերն է խաղում այդ մշտական խորասուզուածութիւնը փիլիսոփայական որոնումների խորքերը, այդ մշտական անցումները փիլիսոփայական մի կառուցուածքից միւսին, այդ մշտապէս հետամուտ լինելը՝ առաւելագոյնս մանրամասնել ճշմարտութիւնը, այդ

---

* Փրոֆ. Ալեքսէյ Լոսեւ դասախօս է Մոսկուայի Համալսարանի Դասական Բանասիրութեան Ամբիոնին։

մշտական թափանցումը մասնատումների եւ միացումների տարբերի մէջ, պարզ ու յստակ բանաձեւերից ունեցած այդ անբաւականութիւնը եւ ձգտումը՝ դրանց մէջ գտնել անհամեմատ աւելի շատ մասնատուածը, աւելի շատ մանրամասնածը՝ ընդհուպ մինչեւ ծայրագոյնս եւ առաւելագոյնս վերջը մեծութիւնների մանրադիտակային զննութիւնը։

Փիլիսոփայելու նմանօրինակ տիպը մենք կ՝անուանենք մի իւրօրինակ վիրտուոզութիւն, որը հենց միշտ ձգտում է մի կողմից՝ մանրագոյն մասնատումների, իսկ միւս կողմից՝ մի նոր համապարփակ համակարգի հասցնելու այդ առաւելագոյն մանր մասնատումները, համակարգ, որը ծանօթ չէր մտածողին՝ քանի դեռ նա սահմանափակւում էր ընդհանուր եւ ամբողջական՝ թէկուզ եւ ճշմարիտ, սակայն այս սիստեմատիկ ու մշտական մասնատումից զուրկ ընդհանուր եւ ամբողջական դատողութիւններով։

Վիրտուոզ ջութակահարը կամ դաշնակահարը մեզ ապշեցնում է իր կատարած երաժշտութեան մանրամասնուած ու մանրագոյն բաղմաթիւ երանգներով, իսկ միւս կողմից՝ նաեւ երաժշտական մանրագոյն երանգների այդ անսահման բաղմազանութիւնից ծնուող տպաւորութիւնների նորութեամբ եւ նոյնիսկ ընդհանրացումների անսպասելիութեամբ։ Ըստ որում, լաւ վիրտուոզ համարւում է հենց այն կատարողը, ով՝ այդ արտակարգ նրբին մանրամասների մէջ ամբողջովին խորասուզուելով հանդերձ միաժամանակ հենց ստեղծում է ինչ-որ նոր բան, ամբողջական բան, այն՝ ինչ չի ստացւում պարզ եւ չտարբերակուած մեղեդիներ կատարելիս։ Լինում են սնամէջ վիրտուոզներ, որ դարմացնում են սոսկ իրենց վարպետութեամբ զուրկ որեւէ միասնականութիւնից եւ մի նոր ամբողջականութիւնից։ Սակայն լինում են նաեւ ճշմարիտ վիրտուոզներ, ովքեր մանրագոյն մանրամասների մէջ խորամուխ լինելով հանդերձ՝ որպէս արդիւնք ստեղծում են անսպասելիօրէն նոր եւ արդէն ո՛չ սոսկական հմտական համակարգ։

Մեզ թւում է, թէ Դաւիթ Անյաղթը հենց փիլիսոփայական մտքի այդպիսի ճշմարիտ վիրտուոզ է՝ շարունակ խորասուզուած տարբեր-տարբեր մանրամասների մէջ, որոնք փիլիսոփայական քաղքենուն յաճախ թւում են աւելորդ, բայց որոնք պատմա-փիլիսոփայական նուաճումները աւելի նրբին ամէն մի գնահատող հասկանում է որպէս ինչ որ զեղեցիկ բան՝ խորին, եւ փիլիսոփայական համակարգի համար յո՛յժ կարեւոր։ Դաւիթ Անյաղթը հետամուտ չէ իր գաղափարների անպայմանօրէն նորութեամբ, այնպէս որ նրա համար Պղատոնի կամ Արիստոտելի, ստոյիկների, Պղոտինի կամ Պորփիւրի դատողութիւններից օգտուելը մի դժուար բան չէ։ Սակայն նա բնաւ

երբեք չի հանդիսանում նաեւ այս կամ այն դասական, կամ կամ այն փիլիսոփայական կշռադատութիւնների սոսկ վերարտադրողը։ Դաւիթ Անյաղթին համարում են նոր պղատոնական, եւ շատ բանով դա ճիշդ է։ Սակայն մտածողութեան այն վիրտուոզ նորութիւնը, որ իւրայատուկ է Դաւիթին, դասական նոր պղատոնականների մօտ մենք չենք կարող գտնել, կամ էլ կարող ենք գտնել միայն սաղմնային վիճակում։ Դաւիթ Անյաղթին համարում են նաեւ դասական նոր պղատոնիզմի աղեքսանդրեան ուղղութեան ներկայացուցիչ, եւ այստեղ նոյնպէս շատ բան ճիշդ է։ Սակայն ոչ մի դէպքում չի կարելի Դաւիթ Անյաղթին յանդեցնել միայն Պղատոնի եւ Արիստոտելի մեկնութիւններին, ինչպէս մենք գտնում ենք աղեքսանդրիականների մօտ։ Եւ առհասարակ, փիլիսոփայական վիրտուոզութեան տարրեր, ի հարկէ, կան սփռուած ամբողջ դասական շրջանում՝ սկսած Սոկրատից։ Սակայն դասական փիլիսոփայութեան մէջ գտնել մի այնպիսի մտածող՝ ում համար փիլիսոփայական վիրտուոզութիւնը իւրայատուկ առանձնայատկութիւն է, չափազանց դժուար է, եթէ ընդհանրապէս անհնար չէ։

20-րդ դարի տեսանկիւնից Դաւիթ Անյաղթի շատ պնդումներ եւ մեթոդներ կարող են թուալ, ինչ խօսք, մի ինչ-որ չափազանց հեռաւոր հնութիւն եւ պատմութեան արդէն վաղուց ի վեր յաղթահարուած ինչ-որ ժամանակաշրջան։ Սակայն, նախ՝ դա այդպէս չէ հենց ըստ էութեան։ Ըստ էութեան, տակաւին հենց այժմ հարկ է լինում նրանից շատ բան սովորել եւ շատ բան փոխ առնել նաեւ մեր ժամանակակից փիլիսոփայական կառուցուածքների համար։ Երկրորդ՝ եթէ Դաւիթ Անյաղթին նոյնիսկ համարենք միայն հեռաւոր պատմութիւն, ապա դեռեւս պէտք է կարողանալ ճեւակերպել այդ հեռաւոր պատմութեան իւրայատկութիւնը։

Եւ ահա, օրինակ, Դաւիթ Անյաղթի մտքի այնպիսի առանձնայատկութիւնը, ինչպիսին է մտքի վիրտուոզութիւնը, դեռեւս չափազանց քիչ է լուսաբանուած մեր գրականութիւնում եւ պահանջում է ամենամանրաղնին ու ստոյգ ճեւակերպում։ Մինչդեռ, ինչպէս մեզ թուում է, Դաւիթ Անյաղթի փիլիսոփայական մտքի ճկունութիւնը եւ շարժունութիւնը հանդիսանում են այդ փիլիսոփայի ողջ պատմա-փիլիսոփայական իւրայատկութեան հենց ամենակարեւոր կողմերից մէկը, եւ կարելի է ասել՝ նրա պատմա-փիլիսոփայական սխրագործութեան ամենակարեւոր երեւոյթներից մէկը։ Դաւիթ Անյաղթի մտածողութեան մասնատուածութիւնը ոչ մի կերպ չի կարելի յանդելցնել շարադրման վերացական-գրական մեթոդին։ Անիրազեկ մէկի համար չափազանց հեշտ է Դաւիթ Անյաղթի՝ նրբին տարբերակումների որոնումները մեկնաբանել որպէս չափազանց

դպրոցական մի բան, ինչ-որ չափազանց իմացական եւ ինչ-որ չափազանց դպրական մի բան։ Այդպէս հասկանալ Դաւիթ Անյաղթին, նշանակում է նրան ամենեւին ո՛չ մի կերպ չհասկանալ, եւ ոչ մի կենդանի դրոյթ չգտնել փիլիսոփայի այդ մշտական տարբերակումների մէջ։ Այսինքն՝ նրա մօտ չգտնել համապարփակութեան մշտական պաթոսը, դա նոյնպէս նշանակում է վատ դլուխս հանել 6-րդ դարի հայ խոշորագոյն փիլիսոփայից։ Պէտք է կարողանալ, Դաւիթ Անյաղթի հետքերով, մանրազնին ու խնամքով ձեւակերպել նրա մօտ սահմանուող բոլոր տարբերակումները, պէտք է կարողանալ պարզ ու յստակ ձեւով հասկանալ ու նկարագրել իւրաքանչիւր այդպիսի մանրագոյն տարբերակում, եւ պէտք է կարողանալ, Դաւիթ Անյաղթի հետքերով, այդ տարբերակումների նկարագրութիւններից անցնել նրանց համապարփակ կարեւորմանն ու իմաստաւորմանը։ Միայն այդ ժամանակ մենք կարող ենք յոյս ունենալ, թէ կը մերձենանք ուսումնասիրուող փիլիսոփայի ճշմարիտ առանձնայատկութեանը։ Մտքի վիրտուոզութիւն՝ որպէս նկարագրա-տարբերակային համապարփակութիւն հասկացուած մտքի վիրտուոզութիւն — ահա թէ ինչ ուղիներով միայն կարելի կը լինի մօտենալ Դաւիթ Անյաղթի առանձնայատկութիւնը հասկանալուն, բայց այն էլ, թերեւս, այդ առանձնայատկութեան միայն գլխաւորագոյն կողմերից մէկին։

Սակայն մտածողութեան ճշմարիտ վիրտուոզութիւնը ոչ միայն համապարփակութիւն է՝ ոչ միայն նկարագրա-տարբերակային համապարփակութիւն է, այլ նաեւ այնպիսի ունիվերսալութիւն, որը միաժամանակ նպատակ ու խնդիր է՝ կատարելու համար նկարագրա-տարբերակային աստիճանական, հետեւողական ու սիստեմատիկ անցումներ։ Այլապէս համապարփակութիւնը կը ցնորուի վերացականորէն հակադրուած տրոհուած տարբերի տարանջատ բազմութեան։

Դաւիթ Անյաղթը ընդհանրապէս դէմ է ամէն մի ձեւա-տրամաբանական բաժանման։ Տեսութիւնը եւ գործնականը, որոնց տրոհում է փիլիսոփայութիւնը, միաւորուում են մի ամբողջութեան մէջ՝ որ է՝ մարդկային հոգու ձգտման մէջ՝ հասնել առաւելագոյն ճշմարտութեան։ Այս առումով՝ փիլիսոփայութիւնը հոգու գործն է։ «Եւ անհրաժեշտ է գիտենալ,— եզրայանգում է Դաւիթը,— որ փիլիսոփայութիւնը գոյութիւն ունի այն բանի համար, որպէսզի ազնուացնի ու զեղեցկացնի մարդկային հոգին»[1]։ Մտքի նկարագրա-տարբերակային վիրտուոզութիւնը ընդունում է անսահմանօրէն տարբեր ձեւեր, սակայն մարդկային ձգտման այդ անսահմանութիւ-

---

1· Դաւիթ Անյաղթ, Երկեր, Մոսկուա, էջ 99 (ռուսերէն)։

նը հնարաւոր է միայն այն պատճառով, որ նրա համար գոյութիւն ունի սահման՝ նոյնպէս անսահման, որը նաեւ առկայ է մարդկային բանականութեան իւրաքանչիւր մանրագոյն շարժման մէջ։ Դաւթի մօտ կարդում ենք. «Բնութիւնն ամենուրեք ունի բոլոր իրերի իր վերջին սահմանները, որովհետեւ ունի իր չափը ե՛ւ սակաւութեան, ե՛ւ շատութեան ե՛ւ փոքրութեան, ե՛ւ մեծութեան մէջ»[2]։ Սակայն՝ «ինչ սահմանափակ է ըստ բնութեան... անսահման է ըստ կիրառութեան»։ Անհատ իրերը՝ «ըստ մեր գիտութեան... անսահման են, բայց ըստ բնութեան անսահման չեն»[3], թէեւ դրանց քանակը անվերջ է։

Դաւթի Անյաղթի պատմա-փիլիսոփայական սխրանքը նրա տեսութիւնը եւ մեթոդն են՝ բացարձակ, այսինքն՝ անսահման, առաւելագոյնս ընդհանրացուած ճշմարտութեան եւ մարդկային առանձին որոնումների՝ իրենց ընոյթով վերջաւոր պահերի վիրտուոզ միահիւսման տեսութիւնն ու մեթոդն են։ Մենք կ՝ասէինք, Դաւթի Անյաղթի այդ փիլիսոփայութիւնը՝ թող որ հեռաւոր, թէկուզ եւ մօտաւոր ու մանակի, բայց եւ այնպէս՝ այն բանի կանխատեսումն է ինչ ասել է Վ. Ի. Լենինը. «Մարդկային մտածողութիւնն իր բնոյթով ընդունակ է տալու եւ տալիս է մեզ բացարձակ ճշմարտութիւն, որը կազմուած է յարաբերական ճշմարտութիւնների գումարից։ Գիտութեան զարգացման իւրաքանչիւր աստիճան նոր հատիկներ է աւելացնում բացարձակ ճշմարտութեան այդ գումարին, բայց իւրաքանչիւր գիտական դրոյթի ճշմարտութեան սահմանները յարաբերական են, քանի որ մերթ ընդարձակւում, մերթ նեղանում են գիտելիքների հետագայ աճի հետեւանքով»[4]։

---

2. Նոյնը, էջ 149։

3. Նոյնը, էջ 148։

4. Վ. Ի. Լենին, Երկերի Լիակատար ժողովածու, ԺԸ. հտր., էջ 137 (ռուսերէն)։

THE HISTORICO-PHILOSOPHICAL VENTURE OF DAVIT ANHAGHT

ALEXEI LOSSEV

(Summary)

Davit Anhaght is often and justly called an Alexendrian neoplatonist, but in our opinion he cannot be considered one of the classical figures of the school. Because his style of harmonizing and assimilating the Platonic and Aristotelian philosophies into an intricate and coherent system, shows great philosophical virtuosity. His conception of philosophy as man's noble aspiration for universal knowledge preserves much of its freshness and anticipates modern progressive ideas.